




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Եւ յեկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:
(ՂՈՒԿ., Բ 14—15)

որից են հնչում Սուրբ Մերենդյան գիշերվա զանգերը և աշխարհի բարի կամքի տեր, խաղաղության ծառավի միլիոնավոր մարդկանց ավետում խաղաղության և համերաշխության սրբազան պատգամները՝ «Եւ յեկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Քսան ձիգ դարեր են անցել պատմական այն գիշերվանից, երբ հրեշտակները, Բեթլեհեմցի հովիվների միջոցով, բոնության, տգիտության, խավարի և հուսահատության մեջ տառապող մարդկությանը ավետեցին ծննդյան այդ պատգամները:

Քսան դար հետո ևս այդ պատգամները չեն կորցրել իրենց խորը նշանակությունն ու արժեքը աշխարհի համար, մարդկության համար: Ավելին. այսօր, երբ երկրի խաղաղության և ժողովուրդների համերաշխության վրա նորից իր մոայլ ու արյունոտ ձեռքն է երկաթե պատերազմների նոր սարսափը, Սուրբ Մերենդյան այդ պատգամները ավելի ուժգին են հնչում ու ավելի այժմեական, քան երբևէ:

Ոչ մի ժամանակ աշխարհը չի տեսել այնքան արյուն ու արցունք, այնքան ավերածություն, որքան 20-րդ դարում: Մարդկությունը երբեք չի տեսել այնքան տառապանք ու վիշտ, որքան մեր օրերի սերունդը այս վերջին հիսնամյակին: Սակայն այսօր ևս մարդկությունը կանգնած է նոր պատերազմի սարսափի առաջ. երկնակամարի վրա նոր փուլումներ ու փոքորիկներ ազդանշող նոր ամպեր են կուտակվում, նորից հաղեւ են եկել ներոններ, որոնք ուզում են ավելի մեծ չափերով կրկնել մարդկության ողբերգությունը:

Մնայուն խաղաղությունը՝ հույսն է մարդկության: Խաղաղությունը հաճապագօրյա հացի և ջրի չափ անհրաժեշտ է այսօր մարդկությանը, աշխարհին: Այսօր, ավելի քան երբևէ, ժողովուրդները կարիք ունեն մնայուն խաղաղության, համերաշխության, փոխադարձ վստահության: Աշխատավոր մարդկությունը չի ցանկանում Աստծու բարիքներով լիքը այս հիանալի աշխարհը վերածել ողբի, վշտի, արյունի հովտի և աստվածատուր խաղաղությունը խեղդել նոր պատերազմների կրակի և բռնությունի մեջ:

Ահա րե ինչո՞ւ, այսօր մանավանդ, երբ աշխարհի վրա կախվել է նոր պատերազմի սարսափը, այնքան սրտապնդիչ, ցանկալի են հենում Սուրբ Մենդյան պատգամները՝ «Խաղաղություն երկրի վրա և համերաշխություն մարդկանց մեջ»:

Ո՞ւմ է հարկավոր պատերազմը: Քրիստոսի և քրիստոնեության բնամիներին: Քրիստոնեությունը դեմ է պատերազմի՝ «Ով որ սուր կվեցնի, սրով էլ կընկնի»: Ո՞վ է պատերազմ ուզում — հարստահարողները, կեղեփիչները: Ո՞վ է խաղաղություն ցանկանում — ժողովուրդները, մարդկության բարիքներ ստեղծող աշխատավորությունը:

Քրիստոսի ծննդից առաջ բովանդակ անտիկ աշխարհը տառապում էր խաղաղության և համերաշխության պակասից. Քրիստոսից առաջ, աշխարհը երբեք չէր տեսել խաղաղություն, այն իմաստով, ինչ բերում էր Քրիստոսը աշխարհին. «Ձխաղաղությիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ»:

Պերիկլեսի դարաշրջանում և նրա հաջորդ նեկեկեստական հասարակությունը Քրիստոսի ծննդյան դարաշրջանում ապրում էր փառափառության, հասարակական, տնտեսական և գաղափարական խոռ անկում: Մեդի, տգիտության, նախապաշարմունքների մեջ բաղված մարդկությանը չէին օգնում ոչ արևելի մոգական ծեսերն ու միստիցիզմը և ոչ էլ աստղահամայնությունը: Սուրկատիրական հասարակությունն ապրում էր դառն փորձությունների, հուսահատության մի շրջան: Կյանքը զրկվել էր իր հենարանից և «Ժամանակը դուրս էր սայթափել իր շավղից»: Զօգնեց հուսահատ մարդկությանը ոչ մի փիլիսոփայական սխտեմ՝ ոչ ստոիկների, ոչ նեոպյութագորականների և ոչ էլ նեոպլատոնականների: Նրանք ապրել էին իրենց դարը և անցել պատմության գիրկը: Մարդկային հսկայական զանգվածներ գտնվում էին տառապանքի, զրկանքի, սուրկացման, կեղեքման անմխիթար վիճակում և սպասում էին իրենց փրկչին, ազատարարին: Փրկության հույսն էր միայն մնացել նրանց:

«Ի լուսմն ժամանակաց» եկավ այդ Փրկիչը: Նա ծնվեց մի խաղաղ ու սուրբ գիշերվա

մեջ, մի մութ փարայում: Նա աշխարհ եկավ որպես «ոյս ի յայտնութիւն հեթանոսաց»: Նա եկավ փշրելու ազգերն իրարից բաժանող կեղծ պատնեշները, խորտակելու շրդաբաները և եղբայրացնելու բոլոր ժողովուրդներին ու ազգերին Աստուծով ի Քրիստոս Հիսուս. «և չիք խտիր ոչ հրէի, ոչ հեթանոսի, ոչ ազատի, ոչ անազատի, ոչ արուի, ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»:

Քրիստոսի ծնունդը մի նոր էջ բացեց մարդկության պատմության մեջ. դա մի արմատական հեղաշրջում էր մարդկային մտածության, ընկերային հարաբերությունների մեջ: Քրիստոնեությունը եղավ այն ընդհանրական կրոնը, որը իր քերի տակ առավ կայսրության մեջ տառապող բոլոր ժողովուրդներին, և իր հումանիստական վեճ գաղափարներով աշխատեց կապակցել, միացնել մի անփակտելի ամբողջության մեջ, մի տիեզերական ընտանիքի մեջ կայսրության բոլոր մշակույթներն ու կրոնները, բոլոր լեզուներն ու ազգերը, եղբայրացնել նրանց հույն տիեզերական Հոր՝ Աստծու խնամքի տակ:

Քրիստոսի ծնունդը խաղաղություն էր բերում խրեթեոսներին: Ոչ հռոմայեցի պրոկուրոր Պիլատոսի պաշարանքում, ոչ էլ Հռոմին վաճառված Հերովդես մեծի պալատում, տեղ չկար խաղաղության համար, Խաղաղության իշխանի համար: Պալատները միշտ դեմ են եղել խաղաղությանը, պալատներում միշտ հենել է ռազմի շեփորը:

Քրիստոսի ծնունդը, «Խաղաղութեան իշխան»ի հայտնությունը մի անշուք գյուղում, վրդովեց Նրոսաղեմում Հերովդեսի պալատի անդորությունը: Խորամանկ Հերովդեսը ուզեց իր խանձարուրի մեջ խեղդել Մանուկ-խաղաղությունը: Առաջին անգամ իր կյանքում նա վախեցավ և դողաց իր զառամյալ կյանքի ավերակի վրա: Մենդյան հաջորդ օրը իմացել էր նաև Հերովդեսը և շտապ, Սիոն լեռան վրա իր ապարանքում ժողով էր հրավիրել և հրամայել հրեա գիտնականներին, օրենքի մեկնիչներին, ֆահանայապետին՝ «Ստուգել վասն մանկանն»: Ի՞նչ հեզոություն անգութ հակատագրի... Հերովդեսը,

հոռմեական կեսարների խռխտ ոգին կրող, փայլուն ձիւրերով օծոված Հոռմի այդ խորամանկ և փառապաշտ դաշնակիցը, որ իր խիղերը դնիւրենում էր բքացրել, որը հոռմեական լեգեոնների օգնությամբ ստրկական հնազանդության մեջ էր պահում հրեա ժողովրդին, ահա այդ Հերովդեսը վախենում էր Մանուկ-խաղաղությունից և ծրագրում էր Բեքլենեմի 2 տարեկանից փոքր երեխաների դիվային կոտորածը, այն հույսով, որ դրանով վերջ կտա խաղաղության իշխանի կյանքին:

Արյունով, բռնությամբ իշխողները, միշտ էլ վախեցել են խաղաղությունից: Բայց պատերազմաբեւ, ռազմամով իշխանները հեշտությամբ չեն զիջում իրենց իշխանությունը՝ խաղաղությանը: Խաղաղությունը կատաղեցնում է նրանց և նրանք կոպում են խաղաղության դեմ օրհասական գազանների մոլուցքով:

Խաղաղությունը հեշտ չէր հաստատել երկրի վրա առանց զոհողության, առանց արյան: Բեքլենեմի մանուկները եղան խաղաղության պայքարի առաջին նահատակներն ու զոհերը, որոնք ընկան խաղաղության բշնամի պալատների արյունոտ սրերից: Ահա իշխողների, խաղաղության բշնամիների եղեռնագործությունները՝ մի ամբողջ գյուղ սգավոր և անմխիթար մայրեր. «Հոռմէլ լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին»:

Հերովդեսից հետո, երեք դար շարունակ կայսերական Հոռմը փրիստոնեական խաղաղության դանին հանդիսացավ: Վրդովվել էր նաև հզոր կեսարների արհունիքի դասական հանգիստը: Կեսարները, որոնք իրենց լեգեոններով սարսափ էին տարածում աշխարհում, այժմ Հերովդեսի նման վախենում էին անգեն անբազ խաղաղության իշխանից, որը հոռմեական լեգեոնների դեմ պատերազմ էր հայտարարել իր խաղաղության, ճշմարտության, համեմատության վեհ գաղափարներով: Բայց կեսարները հեշտությամբ վար չեն դնում իրենց գեները: Հոռմը կատաղի պայքար սկսեց խաղաղության դեմ: «Cristianos ab leones» (փրիստոնեաներն՝ առյուծներին) — այս մոլեգին աղաղակը տարիներ շարունակ դղրդաց-

նում էր կայսրության բազմաթիվ հեթանոս փաղափների ամփիքատոնները: Բայց եկեղեցին աճում էր, ծաղկում խաղաղության մեջ. ամրապնդվում էր խաղաղությունն ու համեմատությունը երկրի վրա, մարդկանց մեջ. «արին մարտիրոսաց, հիմն՝ եկեղեցույ»: Խաղաղության այդ նահատակների հոգիները լիքն էին մի խաղաղությամբ՝ որ աշխարհը նրանց ոչ կարող էր տալ և ոչ էլ առնել: Այն մարտիրոսական, գաղափարական կյանքը, որ նրանց ժամանակակիցների համար մի անհասկանալի ողբերգություն էր, նրանց համար նվիրական և գեղեցիկ մի աստվածային շնորհ էր, մի ասպարեզ՝ որ չնայած հալածանքներին, խոչընդոտներին, նրանք անցնում էին հանգիստ խղճով, ուրախ, բավարարված, պարտականություն կատարողի բարձր գիտակցությամբ: Խաղաղության համար զոհվողների, հալածվողների կյանքը մի գաղտնիք է խաղաղության դանինների համար, բայց այդ գաղտնիքը լուսավորված է այն ճառագայթներից, որոնք ծագում են խաղաղության մարտիկների վրա իրենց խաղաղություն փարող Քրիստոսից: Պալատները նրանց հալածեցին, բայց աշխարհը նրանց հետ եղավ, և մարդիկ ընթացան նրանց արյունով բացված ճանապարհով, որովհետև խաղաղության այդ մարտիկները «հաւատով գործեցին զարդարութիւն, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զգօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ... փառիծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան... բայց հասին անտեսաց»:

Դարերով, աշխարհում պատերազմի սերը, մանավանդ իշխող դասակարգի մոտ, ավելի բուռն է եղել, իսկ խաղաղությունը քվացել է մի հեռավոր անհասանելի երազ, մարդկային հոգու մի քաղձանք՝ անորոշ և անիրագործելի: Հոռմում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, հրածեշտի վերջին ժամին, հանդիսավոր իրադրության մեջ շրջանավարտներին հայտարարում էին. «Գնացե՛ք, և երբ կամենում եք մեծ մարդ լինել, մի՛ մոռայեք, որ կառավարողը Մարսն է»: Նշանակում է, կյանքում պատերազմի աստվածն է վճռում ամեն

ինչ. «Կեցցե՛ Մարս» — գոռում էին միաբերան ուսումնական կայսերականները և մեծ բավականությամբ մտնում հոռմեական լեզոնների մեջ՝ նվաճելու համար դեռևս աննվաճ երկրներ և ծովեր: Անցյալի հասկացողությամբ, ամենաազնիվ զբաղմունքը պատերազմն էր, թալանը, սպանդը և ամենավսեմ մեծությունը ձեռք էր բերվում ազամի դաշտում: Հոռմում աստվածներից էծան և հասարակ բան չկար. իսկ իրենից ի՞նչ էր ներկայացնում աստվածների հայր Յուպիտերը, եթե ոչ ուժ պատկերացնող մի հոռմեական դյուցազն:

Քրիստոնեությունը հին աշխարհի պատերազմի տեսությամբ հակադրեց նոր աշխարհի քրիստոնեական խաղաղության տեսությունը. քրիստոնեությունը դեմ է պատերազմին, պատերազմը ոգի էր Աստծու և մարդկության դեմ: Երանության լեռան վրա արտասանած իր չգերազանցված պատգամներով, Քրիստոսը շրջեց հին աշխարհի բոլոր արժեքների տախտակները և տվեց նոր կրոնի տասնաբանյան՝ իբրև նոր կյանքի կանոն և սկզբունք: Լեռան փարոսը քրիստոնեության հավատամքի և բոլոր ժամանակների մարդկության ամենաարտագրավ ձրգտումների, իդձերի բյուրեղացումն է: Աշխարհի բարոյական հեղաշրջման սկիզբն էր դա. «Հոգի Տեառն ի վերայ իմ... անտարանել աղքատաց առաքնաց զիս, բժշկել զքեկեալս սրտի, փարոզել զերեսաց զքողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրատուս ի քողութիւն, փարոզել զտարեկան տեառն ընդունելի» (Ղուկ., Դ 18—19): Ապա՝ երանիների մարգարտյա շարանը. Երանի՝ սգավորներին, հեգերին, արդարության փաղցն ու ծարավը ունեցողներին, արդարության համար հալածվողներին, ողորմածներին, խաղաղարարներին և սրտով սրբերին: Երանության լեռան մեծ փարոզը, ամենաբարձր երանին տալիս է «խաղաղարարներ»ին, խաղաղություն կերտողներին, նրանց անվանելով Աստծու որդիներ:

Սակայն քրիստոնեայի կյանքն էլ պայքար է, «զբարտո՛ պատերազմն պատերազմիլ» է հանուն խաղաղության, արդարության, սիրո, ազգերի համերաշխության:

«Երանի՛ խաղաղարարներին, նրանք Աստծու որդիներ պիտի կոչվին»: Որքա՛ն արհավիրքներ, ցավ ու արցունք, և փանի՛ միլիոնավոր կյանքներ կխնայվեն մարդկության համար, եթե աշխարհը ընթանա Քրիստոսի խաղաղության ոգով. «Խաղաղություն երկրի վրա և համերաշխություն մարդկանց մեջ». ո՛վ չէր ուզում մարդկանց տեսնել իրար նկատմամբ անենեզ, հավատարիմ, սրտաբաց ընկերներ, և ոչ մարդ՝ մարդու գալլ. մարդկանց համար խաղաղությունն ու համերաշխությունը անհասանելի, անիրագործելի գոյավիճակ չէին: Այդ կյանքը ապրեց և փարոզեց Քրիստոսը:

Խաղաղությունը մեր օրերում սկսում է մարմնավորվել. նա փարոզ չէ այլևս, այլ գործ. աշխատավոր մարդկությունը իր ձեռքն է վերցրել խաղաղության պահպանման գործը և պայքարում է նոր պատերազմի դեմ: Նորից են հնչում աշխարհով մեկ Ս. Մենդյան նվիրական գիշերվա զանգերը:

Մնունդներ — միշտ ուրախություն, երջանկություն են ծնողներին. ծնունդներ էլ կան, որոնց ուրախությունը դուրս է գալիս մասնավոր ընտանիքի նեղ շրջանակից: Քրիստոսի ծնունդը այնպիսի մի ծնունդ է, որի բերած ուրախությունը տիեզերական է, և նրա ծննդյան նշանակությունը՝ համամարդկային: Այս ծնունդը իր եզակեան և աստվածային հանգամանքով աղբյուրն է մարդկության ուրախության, երկրի խաղաղության, ազգերի համերաշխության և մարդկանց փրկության: «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա» — անա Քրիստոսի մարդեղության խորհրդի իմաստը: Քրիստոսը պատռեց մարդկության մեղքի, տգիտության, չարիքի պարտամուրհակը և նորից նրանց Աստծու որդիներ դարձրեց, որպեսզի մարդիկ վերագտնեն այն խաղաղավետ կյանքը, որ բաժինն է խաղաղարարներին, այսինքն՝ Աստծու որդիներին:

Քրիստոսի Ս. Մենդյան գիշերը հնչեցին նաև «Հայաստանեայց Առաքելական և Սուրբ Եկեղեցւոյ» զանգերը. թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ տարագիր Սփյուռքի հայությանը ավետեցին խաղաղության նույն պատգամները՝ «Խորհուրդ մեծ և սփանշելի, որ յայսմ աուր յայտնեցաւ»:

Ամբողջ 16 դար, ո՛չ հուրը, ո՛չ սուրը և ո՛չ էլ ժամանակը չեն կարողացել մարել մեր ժողովրդի սրտում խաղաղության այդ սերը: Աշխարհում ամենահին կոպտուրական ժողովուրդներից մեկը և առաջին Բրիտանյա ժողովուրդը՝ հայ ժողովուրդը իր պատմության բովանդակ ընթացքում շատ բան է վճարել խաղաղության համար: Նա շատ է տառապել, պայքարել հանուն խաղաղության, հանուն երջանկության, հանուն հայրենի հողի՝ իր վիրավոր գլուխը հանգչեցնելու համար: Մեր կրոնական պոեզիայի, եկեղեցական բանահյուսության ամենալայն և ամենաժողովրդական մոտիվը եղել է խաղաղության մոտիվը: Մեր շինարար աշխատասեր ժողովուրդը ցանել է արյունով և հնձել միշտ արտաավելով. խաղաղություն չի ունեցել, խաղաղություն չի տեսել: Բայց խաղաղությունը միշտ էլ նրա հոգու պայծառ երազն է եղել: Մեր դաշտերի նման շատ լայն է եղել մեր ժողովրդի սիրտը, մեր սարերի նման աննվաճ՝ նրա հոգին, մեր ձորերի պես խորը մեր ժողովրդի հավատը՝ խաղաղության, բարության, բարության վերջնական հաղթանակի նկատմամբ: Եվ այդ մնայուն խաղաղության ոգով լցված կանգնել է նա՝ հպարտ մեր սարերի նման, իր գլխին քափվող բոլոր փոքորիկների և ջրհեղեղների դեմ:

Մեր ժողովուրդը, իր ժամանակակից պատմության վերջին երեսնամյակին միայն կարողացել է ձեռք բերել այն իրական, մնայուն խաղաղությունը, որի համար նա պայքարել է, երազել է, հուսացել: Այդ նոր նվաճված խաղաղության պայմաններում անել է մեր ժողովրդի կենսունակությունը: Մեր ժողովուրդն այժմ ապրում է իր պատ-

մության մեջ նմանը չտեսնված ազգային վերածնունդ՝ իր կյանքի բոլոր բնագավառներում: Նա տեսել է և իր կյանքի փորձով հասկացել խաղաղության արժեքը, ուստի և կանգնել է խաղաղասեր ժողովուրդների ընտանիքի մեջ խաղաղության համար մղվող պայքարի առաջին շարքերում:

Խաղաղության պահպանման հարցը մահու և կենաց հարց է այսօր աշխարհի բոլոր ժողովուրդների, կրոնների, լեզուների համար: Խաղաղության համար մղվող պայքարում մեծ դեր ունի Բրիտանական եկեղեցին:

Թո՛ղ ավելի հենդ դողանքեն Ս. Մերենդյան գիշերվա նվիրական զանգերը՝ խաղաղության և համերաշխության պատգամներով:

Թո՛ղ ավելի ուժգին հենեն էջմիածնի մայր տանարի պատմական զանգերը և Մայր Հայրենիքի ու Սփյուռքի իր հավատացյալ զավակներին հրավիրեն աղոթելու խաղաղության համար, համերաշխության համար:

Թո՛ղ ջերմագին աղոթեն մեր հավատացյալները խաղաղության համար, աղոթեն այն հավատով, որով դարե՛ր շարունակ աղոթել են մեր պապերը, Հայ եկեղեցու լուսեղեն խորանների առաջ. «Մայր Սուրբ սփռնչելի լուսոյն, որ գլխտուածն ամենայն յախտեանց յորովայնի քում կրեցեր և ցրնծութիւն յաշխարհի ծնար զԲանն Աստուած, աղաչեմք ... Զի լոսեցին պատերազմունք, դադարեցին յարձակմունք բշնամեաց, տընկեցի սէր և արդարութիւն ի յերկրի, աղաչեմք»:

Թո՛ղ ուժգին հենեն Ս. Մերենդյան գիշերվա նվիրական զանգերը:

